ՍՈՒՄԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Այն վերնագրով նոր երգարան մի տպագրուած է Ալեքսանդրիա, առաջարկութեամբ Մարգասիրական Ընկերութեան և խմբագրութեամբ Առաքել Գրիգորեանց, որոյ մէջ կը պարունակին բաւականին Ազգային երգեր, որոնք յարդ տպագրուած չեն երգարանաց մէջ։ Այն նոր երգարանի ամբողջ զարմանակութեան մասին դատաստան ունենալու համար՝ անշուշտ կարդացած է բոլոր նոր երգերն, որոնք Թիֆլիս Ռուսաստանի մեր ազգայնոց յատուկ քարքարոտ գրուած են, բայց ամէն հայու համար հրապոյր ունին և արժանի են ընթերցանութեան։

Հետևեալ երգն նոյն երգարանէն առնելով՝ արժան կը համարինք տպագրել ի յորդոր Ազգայնոց։

Լսեցէ՛ք, ով իմ Հայեր. մի կարծէք նոր լուր եմ առեմ,
Իմացէք ձեզ չահաւէտ էս խօսքերս սուր եմ ասեմ.
Ո՛վ կուզէ Թող լաւ լսէ ներան սրտիս դիւր եմ առեմ,
Ով կամի Թող հասկանայ, ներան իմ ջան հիւր եմ առեմ,
Արդեօք ներան ինչ անուն տամ, ներան խելքիս Թիւր եմ առեմ։
Լսեցէք ով իմ Հայեր, մի կարծէք նոր լուր եմ առեմ և այլն։

Լսեցէք ու հիմանաք մեր վաղուընուայ անքը, Հայեր,
Թէ ինչպէս հռչակված էր անուամբ Հայոց ազգը, Հայեր,
Ա յլոց պէս Հայն էլ ունէր մեծ տէրութեան փառքը, Հայեր,
Թագաւոր, զօրք, զօրավար, քաջ ու ազնիւ վարքը, Հայեր,
Անհամար գեղ ու քաղաք ունէր մեր աշխարհքը, Հայեր,
Բայց հիմիկ ինչ մընաց մեզ, մեր յաւերը բիւր եմ առեմ։
Լսեցէք ով իմ Հայեր, մի կարծէք նոր լուր եմ առեմ և այլն։

Թշնամիք մեր աշխարհքը քանդեցին աւերակ Թողին,
Էն մեծ մեծ քաղաքներից Անին մեզ օրինակ Թողին,
Մեր Թագ, գայան խլեցին, Հայաստան անձրագ Թողին,
Էն Հայոց բազմութիւնը մաղի նըման բարակ Թողին,
Սպանելով, գերս քշելով ցիր ու ցան ոտքի տակ Թողին,
Անհեր վարքից էր ոչ, չէ Թէ էս ձեզ ցուր եմ առեմ։
Լսեցէք ով իմ Հայեր, մի կարծէք նոր լուր եմ առեմ և այլն։

Բայց հիմիկ ամէն աշխարհ Թափառական մենք ցրուել ենք,
Զրկուած Հայրենիքից, նախնեաց վարքից հեռացել ենք,
Մեր հաւատ, մեր Ազգ, լեզուն, էլ չենք պաշտում ուրացել ենք,
Սրտացաւ չենք մէկ մէկու, մեզ վարքով խաւսացել ենք,
Թշուառ ենք, մեր լաւն ու վատ, չենք հասկանում կուրացել ենք,
Ի՞նչ ասեմ, որ միւն ասեմ, Հայեր, մեզ Թուք մուր եմ առեմ։
Լսեցէք ով իմ Հայեր, մի կարծէք նոր լուր եմ առեմ և այլն,

digitised by A.R.A.R.@

Թէ ուղենք մեր վիճակը, էապէս խեղճ, Թշուառ չի մնայ,
Ոչ մէկ Հայ տըղէտ, անբան, բեռնակիր տաւար չի մնայ
Կը պառի աղքի շահը, այլոց ձեռք աւար չի մընայ,
Միաբան մեր հոգս կանենք, մեր մէջ մարդ շուար չի մընայ,
Կրկին մեզ լոյս կը ծագի, մեր օրը խաւար չի մընայ.
Թէ առնենք ուսման հասը, որ փրկութեան դուռ եմ ասում։
Լսեցէք ով իմ Հայեր, մի կարծէք նոր լուր եմ ասում և այլն։

Տեսէք Թէ ուրիշ ազգեր ուսումով ինչ կարգի հասան,
Վաղ էին խեղճ, վայրենի, հիմիկ աղնիւ վարքի հասան.
Զուռնէին կարգ ու կանոն, հիմիկ էնպէս սարքի հասան
Սաղ աշխարհ իրանց ձեռն է, էն իմաստուն բարքի հասան
Մաղկեցան, շատ ղօրացան, ահա ինչպէս փառքի հասան.
Եւ ոչ Թէ Հոյի նըման, ամենից Թափուր եմ ասում։
Լսեցէք, ով իմ Հայեր, մի կարծէք նուր լուր եմ ասում և այլն։

Ինձ կ'ասեն "Մի գանգատվիր, լոյս ունեցիր Հոյի մասին,
Հայը միշտ հետեւող է լաւ անուան համբաւի մասին,
Մի կարծիր նա չի յաւում իւր խորտակուած նաւի մասին,
Համբերիր և քո Հայնել ճար կանի իւր ցաւի մասին ".
Ի՞նչ ասեմ, մի Թէ կարնամ, էլ խօսք բացել դաւի մասին։
Սաւրէնն եմ, էապէս խօսքեր օրէնը հարիւր եմ ասում։

Տ. Տ. ՄԿՐՏԻՉ ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԿԻԼԻԿԻՈՅ

Կիլիկիոյ վիճակի եկաւորներէն կ'իմանամք, Թէ Տ. Տ. Մկրտիչ Կաթողիկոսն մեծ ջանքեր կ'ընէ Կիլիկիոյ վիճակի Թեմականաց բարոյական և ուսումնական յառաջադիմութեան համար։ Արդէն իւր յորդորանօք և ղեկղեկութեամբ քանի մը տեղ դպրոցներ բացուած և ընկերութիւններ հաստատուած են։ Մարաշի մէջ յատուկ յորդորներ կարգալով կանոններ հաստատած է, որով և վերցուցած է հարսանեաց, ննջեցելոց Թաղման, և այլ այսպիսի սպասողութեանց ժամանակ ընտանեաց մէջ կատարուած չափազանց ծախքերն, զորս շատ անգամ ջրքաւոր ընտանիքներն իսկ ունենալ կամ նմանելու նախանձով կընեն ի միասս իրենց ընտանեկան բարեկեցութեան։

Յիշեալ Կաթողիկոսն յատկապէս այցելութեան կ'երթայ Թեմականաց, եկեղեցիներն և եկեղեցականաց վիճակն ուղղագատողութեան կ'առնու և հայրաբար խրատողութեան, սիրոյ և աշխատու-

digitised by A.R.A.R.@